Դրամական փոխանցումներ IDBank-ից դեպի IDpay

Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
|2021 թվականի սեպտեմբերի 01-ի N 332-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2021 թվականի սեպտեմբերի 03-ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:
Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք http://www.idbank.am/ հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի Հեռախոսազանգերի կենտրոն՝ (+37410) 59 33 33 , (+37460) 27 33 33 հեռախոսահամարներով:

Տեղեկատվական ամփոփագիր

Փոխանցում նախաձեռնողի կողմից ներկայացվող անհրաժեշտ տվյալները*	• **IDpay**-ի գործող հաճախորդի՝ **IDpay**-ում գրանցած հեռախոսահամարը • գումարը • ՌԴ ռուբլով հաշվեհամար IDBank-ում
** Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:*	
IDBank-ից դեպի IDpay դրամական փոխանցումները գործող հաճախորդների միջև իրականացվում են՝ • **IDBanking.am** և **banking.idram.am** համակարգերի առցանց հարթակներում	

- **Idram&IDBank** բջջային հավելվածի միջոցով

Բանկը հաճախորդին է տրամադրում յուրաքանչյուր փոխանցման կատարումը հաստատող անդորրագիր:

Փոխանցման արժույթը	ՌԴ ռուբլի
Փոխանցման արագություն	Մինչև 5 րոպե
Մեկ փոխանցման առավելագույն գումար	15,000 ՌԴ ռուբլի
Ամսական փոխանցումների առավելագույն գումար	1,000,000 ՌԴ ռուբլի
Մեկ փոխանցման նվազագույն գումար	100 ՌԴ ռուբլի
Փոխանցողից գանձվող սակագները	Փոխանցվող գումարի 0,9%-ի չափով
	Միջնորդավճարը կարող է գանձվել հաճախորդի՝ Բանկում առկա դրամային հաշվից, ընդ որում արտարժույթի փոխարկումը կատարվում է ՀՀ ԿԲ կողմից տվյալ օրվա սահմանված փոխարժեքով:
Ստացման եղանակը	Փոխանցումներ **IDpay**-ի գործող հաճախորդների էլեկտրոնային դրամապանակին (այնուհետ նրանք գումարը կարող են փոխանցել հավելվածին կցված քարտին):

Ֆինանսական կազմակերպության կողմից վճարման և (կամ) փոխանցման ուշացման, չկատարման կամ մասնակի կատարման դեպքում կիրառվող ընթացակարգին (օրինակ՝ վնասի փոխհատուցման), ժամկետներին և պատասխանատվության շրջանակներին, ինչպես նաև սպառողի կողմից իրականացված վճարումների և (կամ) փոխանցումների հետ կապված բողոքարկման ժամկետներին, բողոքարկման ժամանակ կիրառվող ընթացակարգերին և սպառողի կողմից դրանց կիրառման կարգին և միջոցներին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://www.idbank.am/content/handling-of-customer-complaints/

Փոխանցումը նախաձեռնողի կողմից փոխանցման չեղարկման և հետ կանչելու դեպքում հաճախորդը Բանկին ներկայացնում է դիմում՝ նշելով չեղարկման և հետ կանչելու հիմնավորումները: Բանկը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում պատասխանում է

հաճախորդի դիմումին՝ հաստատելով կամ մերժելով այն՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Փոխանցումը չեղարկելու կամ հետ կանչելու դեպքում հաճախորդին հետ է վերադարձվում նաև փոխանցման միջնորդավճարը:

Շահառուի կողմից դրամական միջոցները չստանալու դեպքում հաճախորդը Բանկին ներկայացնում է դիմում: Բանկը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում դիտարկում է հաճախորդի դիմումը և կազմակերպում դրամական միջոցների փոխանցումը ստացող կողմին կամ վերադարձը փոխանցումը նախաձեռնողին: Դրամական միջոցները փոխանցումը նախաձեռնողին վերադարձնելու դեպքում Բանկը վերադարձնում է նաև փոխանցման միջնորդավճարը:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ